ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Հեռ. (0269)22031

N 289
10 հունիս 2014թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հայտնում ենք Ձեզ, որ Ձեր 2014թ. մարտի 7-ի N 28-Ա որոշմամբ 21.03.2014թվականին Վարդենիսի քաղաքապետարանում իրականացված վարչական հսկողության ժամանակ հայտնաբերված ներքոհիշյալ թերությունները քննարկվել է համայնքի ավագանու մայիսի 5- ի արտահերթ նիստում և վերացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

1.Թերի է պահպանված
կառուցապատման նպատակով հողամասերը տրամադրվում են հաստատված ծրագրային փաստաթղթերով սահմանված նպատակային և գործառնական նշանակության և միջոցառումների առաջնահերթությանը համապատասխան:

Հողամասերի գործառնական նշանակության փոփոխման գործառույթները՝ ներկայացված է ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ համաձայնեցման:

2.Թերի է պահպանված
գլխավոր հատակագծի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված փոփոխություններն արտացոլված են գործող գլխավոր հատակագծի համապատասխան գծագրերում և բացատրագրերում:

Ընդունվել է ի գիտություն և արդեն սահմանված կարգով վարվում է ընթացիկ քաղաքաշինական բարտեզը, որտեղ կատարվում են բոլոր համապատասխան փոփոխությունները:

3.Թերի է պահպանված
համայնքի ընթացիկ քաղաքաշինական բարտեզում արտացոլված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և զոտիավորման նախագծի փոփոխությունները:

Համայնքի ընթացիկ քաղաքաշինական բարտեզի վրա արդեն նշվում են բոլոր տրամադրված հողամասերը, նախագծման և շինարարության